

**ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(վերանայված տարբերակ)**

**ԵՆԹԱԾՐԱԳԻՐ V, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**

**ՀԱՅԱՍՏԱՆ. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ-ԼՐԱՑՈՒՑԻՉ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**Նախագծի համարը՝ L2860-ICB-1-05**



**Երևան  
Հունիս, 2015թ.**

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական Ձարգացման Բանկ
ՀԽ	Հանրային խորհրդատվություն
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՕՏՇ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀԶԿ	Հայջրնուղկոյուղի
ԶՏՊԿ	Ջրային տնտեսության պետական կոմիտե
ԶՄԿ	Ջրի մաքրման կայան
ԶևԶ	Ջրամատակարարում և ջրահեռացում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՕԿԶ	Օրվա կարգավորման ջրամբար

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
Ա. Ծրագրի նախադրյալները .....	4
Բ. Ծրագրի գործունեության շրջանակները .....	4
Գ. Ենթածրագիր V -ի նախագծային առանձնահատկությունները.....	5
Դ. Հաշվետվության նպատակը և գործունեության շրջանակները.....	7
II. ՀՕՏ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ .....	7
III. ՀՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ .....	7
IV. ՀՕՏ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ.....	11
V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	12

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ա. Ծրագրի նախադրյալները

1. Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋևՋ) սեկտորի ծրագրի Փուլ I-ի հաջող իրականացումից հետո Հայաստանի կառավարությունը (ՀԿ) Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) միջոցով առաջարկել է Ասիական Ջարգացման Բանկին (ԱԶԲ) աջակցել նոր ծրագրի ֆինանսավորմանը: ԱԶԲ-ն համաձայնել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությանը տրամադրել 40 մլն. դոլար վարկ՝ 10 ենթածրագրերի ՋևՋ համակարգերի վերականգնման և ընդլայնման, Հայջրմուղկոյուղու (ՀՋԿ)<sup>1</sup> աշխատանքի արդյունավետության և ֆինանսական կառավարման բարելավման նպատակով: Լրացուցիչ ֆինանսավորման ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի II փուլը ներառում է 18 քաղաք 92 գյուղ, որտեղ իրականացվելու են վերը նշված գործառնությունները: 10 ենթածրագրերի շրջանակներում նախատեսվում է ներդրում 10 մարզերում: Ենթածրագիր V-ի համար մշակվել է սույն հարկադիր տարաբնակեցման հետազոտական հաշվետվությունը վստահ լինելու համար, որ ծրագիրը բացառում է հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններ:

## Բ. Ծրագրի գործունեության շրջանակները

2. Նախագծի նպատակն է. (ա) վերականգնել և արդիականացնել ջրամատակարարման ենթակառուցվածքները, (բ) բարելավել ջրամատակարարման ծառայությունների իրականացումը, և (գ) բարելավել ջրի կոմունալ սպասարկման կազմակերպության կառավարման և շահագործման արդյունավետությունը:
3. Արդյունքում, Ծրագիրը, շահառու տնտեսություններին կայուն խմելու ջուր մատակարարելով, կապահովի հասարակության առողջությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Այն նաև կօժանդակի աղքատության կրճատմանը՝ (ա) կրճատելով ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքերը և բուժօգնության ծախսերը, (բ) կրճատելով կանանց ինտենսիվ տնային աշխատանք կատարելու ժամանակը, ինչպես օրինակ՝ ջուր հավաքելը, հնարավորություն ընձեռելով նրանց ավելի շատ մասնակցել հասարակական և տնտեսական միջոցառումների, (գ) ապահովելով ավելի անվտանգ և վստահելի ջրամատակարարում, և (դ) անվտանգ և խմելու ջրի կայուն մատակարարման միջոցով ծրագրի բոլոր քաղաքներում և գյուղերում տնտեսությունների կենսամատակարարակի բարելավմամբ:

<sup>1</sup> ՀՋԿ-ն պետական առևտրային կազմակերպություն է, որը կառավարվում և շահագործվում է միջազգային ջրի կոմունալ սպասարկման կազմակերպության հետ կառավարման պայմանագրի միջոցով:

4. Ծրագիրը կստեղծի անվտանգ, վստահելի ջրամատակարարում խողովակաշարերի միջոցով 112 համայնքների համար՝ 18 քաղաք և 94 գյուղ 10 մարզերում (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք և Վայոց Ձոր): Ծրագիրը կիրականացվի ենթածրագրերի միջոցով: Ենթածրագիր V-ի շահառուները՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Բերդ և Դիլիջան քաղաքներն ու Ջորական Պտղավան, Բագրատաշեն և Բերդավան գյուղերն են:

#### Գ. Ենթածրագիր V -ի նախագծային առանձնահատկությունները

5. Ենթածրագիր V-ն ընդգրկում է Տավուշի մարզի Նոյեմբերյան, Դիլիջան և Բերդ քաղաքները ու Ջորական Պտղավան, Բագրատաշեն և Բերդավան գյուղերն են:
6. Շահառու համայնքներում ջրամատակարարման համակարգը հիմնականում կառուցվել է 1950-70թթ.: Որոշ ջրագծեր և ջրաչափական հանգույցներ կառուցվել են 2009-11թթ. ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում: Հֆգյիի Համակարգի մոտ 80%-ը վթարային վիճակում է:
7. Ենթածրագրում ընդգրկված քաղաքների ջրամատակարարման բարելավման նպատակով առաջարկվում են հետևյալ միջոցառումները՝ քաղաքների ջրմուղի ցանցերի գոտիավորում և բոլոր գոտիների ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վթարված խողովակաշարերի փոխարինում:
8. Ենթածրագրում ընդգրկված բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավման առաջարկությունների հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները. բաշխիչ ցանցերի վերակառուցում և կառուցում, որը կհանգեցնի հոսակորուստների նվազեցմանը, ջրապահանջի ապահովմանը և ռաջիոնալ օգտագործմանը,
9. Հաշվի առնելով ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրում ընդգրկված բնակավայրերի թվաքանակը և դրան համապատասխան վարկային միջոցների սահմանափակությունը՝ բնակավայրերի լիարժեք բարելավման առաջնահերթ միջոցառումների ծրագրում ընդգրկվել են այն աշխատանքները, որոնք կբերեն առավել հրատապ խնդիրների լուծմանը: Ընտրվել են տեխնիկական և ֆինանսական առումով իրագործելի առաջարկությունները:
10. Ստորև ներկայացվում են Նոյեմբերյան, Բերդ և Դիլիջան քաղաքների ու Ջորական Պտղավան, Բագրատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման համար այն հիմնական չափանիշները, որոնք հիմք են հանդիսացել առաջնահերթ ներդրումների ծրագրի մշակման համար.
  - բնակավայրերի ընդգրկելիությունը ՀԶԿ-ի կազմում,
  - բաժանորդների կողմից հավաքագրման մակարդակը և պատրաստակամությունը,
  - բնակավայրի ջրամատակարարման առկա վիճակը և բարելավման հնարավորությունը,
  - համակարգի հզորությունը և ջրաապահովման հնարավորությունը,
  - համակարգի կառավարելիության մակարդակի բարձրացման հնարավորությունները,

- համակարգի բոլոր տարրերի տեխնիկական վիճակը և բարելավման կարիքները,
- ջրի հաշվառման առկայությունը և համակարգի կիրառման կամ ներդրման հնարավորությունները,
- անհատական տների մուտքագծերի կառուցման և ջրաչափի տեղադրման անհրաժեշտության ծավալները,
- հոսակորուստների և շռայլումների կրճատման հնարավորություններն ու պահանջվող աշխատանքների ծավալները,
- շահագործման ծախսերի կրճատման, կառավարման արդյունավետության հնարավորությունները:

11. Ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով ենթածրագրի լրացուցիչ բնակավայրերում աշխատանքային նախագծով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները: Իրականացվող աշխատանքների ամփոփ նկարագիրը տես ստերև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Ծրագրով նախատեսված գործողություններն ըստ ենթածրագրի համայնքների

Աշխատանքներ	Չ/Մ	ք. նոյեմբերյան	ք. փետր	ք. հիլիթոմ	գ. բազրատ աշեն.	գ. Պտուական	գ. Զորական	գ. Բելրտան	Ընդամենը
1. Դրենաժային համակարգի կառուցում	զծմ	-	-	600	-	-	-	-	<b>600</b>
2. Արտաքին ջրատարի կառուցում /վերակառուցում	զծմ	-	300	-	2540	-	1070	3910	-
3 ՕԿՁ-ների վերակառուցում	խմ	2050	400	-	400	160	-	280 (160+120)	<b>3290</b>
4. Պոմպակայանների կառուցում	հատ	-	-	-	-	-	1	-	<b>1</b>
5. Ներքին համակարգի վերակառուցում de40 - de250 տրամագծի պոլիէթիլենային խողովակներով (փորձարկում , լվացում, ախտահանում)	զծմ	26050	25065	-	8450	5550	-	3980	<b>69095</b>
6. Բազմաբնակարան շենքերի և հասարակական կառույցների մուտքագծերի կառուցում	հատ	11 /1150	1608	-	651	187	-	430	<b>4026</b>
7. Անհատական տների մուտքագծերի կառուցում ջրաչափական հորերի տեղադրմամբ	հատ	25	20	-	-	-	-	-	<b>45</b>
8. Ճնշման կարգավորիչ և հիդրանտային հորերի կառուցում /վերակառուցում	հատ	-	10	-	2	1	-	2	<b>15</b>
9. Փականների և թաղված փականային հանգույցների կառուցում	հատ	85	64	-	10	4	1	7	<b>171</b>
10. Ջրամատակարարման հորերի կառուցում	կոմպ.	20	-	-	-	-	-	-	<b>20</b>

## Դ. Հաշվետվության նպատակը և գործունեության շրջանակները

12. Տվյալ հաշվետվության նպատակն է վերանայել Ենթաժրագիր V-ի հողի օտարման և տարաբնակեցման (ՅՕՏ) ազդեցությունը՝ հիմնվելով աշխատանքային նախագծի վրա և առաջարկել այն մեղմացնող միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ (հունիս 2009թ.): Սույն հաշվետվությունը կազմվել է ըստ Ջրամատակարարման և Ջրահեռացման Սեկտորի – Տարաբնակեցման շրջանակներում Լրացուցիչ Ֆինանսավորման ծրագրի (2012թ.):

## II. ՅՕՏ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

13. Ըստ Երաշխիքային քաղաքականության հայտարարության դասակարգման՝ Ծրագիրը հարկադիր տարաբնակեցման ազդեցության տեսանկյունից համարվում է Բ դասի (սահմանափակ ազդեցություն): Նախնական, այնուհետև աշխատանքային նախագիծը ցույց է տվել, որ վերականգնողական և շինարարական աշխատանքները իրականացվելու են ՀԶԿ-ի կողմից սեփականություն համարվող տարածքներում, քաղաքային/համայնքային հողերում, կամ քաղաքային/համայնքային ենթակառուցվածքին տրված իրավունքների շրջանակներում: Այսպիսով, չկա հողի ձեռքբերման, ինչպես նաև ՅՕՏ պահանջ:

14. ՀԶԿ-ի Ծրագրի (Փուլ II) Հողի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիրը (ՅՕՏԾ) մշակվել է «Հայջրնուկոյուլդի» ՓԲԸ-ի և հաստատվել Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ՀՀ Տարածքային Կառավարման Նախարարության վերահսկողության ներքո: Փաստաթուղթը վերաբերում է ծրագրի ՅՕՏ-ի ազդեցություններին՝ հիմք ընդունելով նախնական նախագիծը և դրա իրականացման համար համապատասխան բյուջեն: ՅՕՏԾ-ն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2012թ. մարտին: Փաստաթղթի մանրամասները, մեխանիզմները, ընթացակարգերը և փոխհատուցման վճարները պետք է կիրառվեն Հողի Օտարման և Տարաբնակեցման միջոցառումները ծրագրման և իրականացման ժամանակ: Տարաբնակեցման ծրագիրը նույնպես հաստատվել է ՋՏՊԿ-ի կողմից և 2011թ. դեկտեմբերի 19-ին Ծրագրի ՅՕՏԾ-ի հետ միասին ներբեռնվել է ՀԶԿ-ի վեբ կայք:

## III. ՅՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ

15. Աշխատանքային նախագծի հիմնական նախապայմաններից մեկը ՅՕՏ ազդեցության կանխարգելում է, քանի որ ՅՕՏԾ-ն նշում է, որ ենթաժրագրերը, որոնք ներառում են մասնավոր սեփականության ձեռքբերում և/կամ հանգեցնում են էական հարկադիր

վերաբնակեցման, չեն համապատասխանում ծրագրի ֆինանսավորման պահանջներին և, հետևաբար, պետք է բացառվեն ծրագրից:


16. Աշխատանքային նախագծի յուրաքանչյուր բաժնի համար նախապես ուսումնասիրվել են յուրաքանչյուր համայնքի կադաստրային քարտեզները պարզելու համար, թե արդյոք կան որոշ համընկնումներ մասնավոր կամ օգտագործվող հողերի և առկա ջրատարների անցնող ճանապարհների միջև: Կադաստրային քարտեզների ճշգրտում իրականացվել է նաև տեղում՝ հիմք ընդունելով ուսումնասիրություններն ու չափումները, որտեղ անհրաժեշտ է: Ստուգելուց հետո աշխատանքային նախագծում ազդեցությունը օրինական/անօրինական օգտագործվող հողերի/կառույցների վրա բացառվել է:

17. Աշխատանքային նախագծում կիրառված հիմնական սկզբունքները.

- Խողովակները տեղակայված են շինհրապարակներում, որոնք արդեն օգտագործվել են նույն նպատակով և/կամ պատկանում են համայնքի ղեկավարությանը,
- Համայնքների փողոցներում ընտրվել են նոր գծեր, որի միջոցով կկանխարգելվի ՅՕՏ-ն, ինչպես նաև ապագայում համայնքի անդամների կողմից հողերի օգտագործումը: Այն նաև կապահովի ենթակառուցվածքի ավելի հեշտ տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև կկանխարգելի խողովակաշարերի ցանցից ջրի անօրինական օգտագործումը:
- Հողի մասնավոր օգտագործման դեպքում (օրինական կամ անօրինական) տրվել է նոր նախագծային լուծում ազդեցությունները բացառելու նպատակով: Ստորև բերված Պատկեր 1-ը ցույց է տալիս, թե ինչպես է շրջանցվել բնակելի տարածքների վրա ազդեցությունը Բերդ քաղաքում, Պատկեր 2-ը՝ բնակելի տարածքների վրա ազդեցությունը Նոյենբերյան քաղաքում, իսկ Պատկեր 3-ը Բագրատաշեն գյուղում:
- Բոլոր նախագծերը ներկայացվել են, վերանայվել, համաձայնեցվել և հաստատվել համայնքի ղեկավարության կողմից: Ջրատարների փոքր փոխարինումները հաստատվել են համայնքի ղեկավարության կողմից: Նախագիծը նաև վերանայվել է և հաստատվել հասարակական կոմունալ սպասարկման կազմակերպությունների հետ, ինչպես օրինակ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ, «ԳազՊրոմ Արմենիա» ՓԲԸ, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ:
- Համայնքային հողատարածքներում ջրատարերի վերատեղադրման դեպքում նախագծով նախատեսվում է, որ ճանապարհի/հողի մայթերը պետք է փոխարինվեն նույն տեսակի մայթերով:




## Պատկեր 1. քաղաք Բերդ




*Ծանոթություն.*  
 Կապույտ գծեր – գոյություն ունեցող ջրագծեր  
 Կարմիր գծեր – նախագծվող ջրագծեր

## Պատկեր 2. քաղաք Նոյեմբերյան



*Ծանոթություն.*  
 Կապույտ գծեր – գոյություն ունեցող ջրագծեր  
 Կարմիր գծեր – նախագծվող ջրագծեր

### Պատկեր 3. գյուղ Բագրատաշեն



*Ծանոթություն.*  
 Կապույտ գծեր – գոյություն ունեցող ջրագծեր  
 Կարմիր գծեր – նախագծվող ջրագծեր

18. Ծրագրի նախագիծը իրականացվել է շահառու ընկերությունների հետ սերտ համագործակցության արդյունքում:

- Ծրագրի մասին հանրային իրազեկումն և նախագծումը հաստատվել է Հանրային խորհրդատվության (ՀԽ) կողմից Տեղական իշխանությունների (ՏԻ) ներկայացուցիչների և շահառու համայնքների անդամների հետ միասին, աշխատանքային նախագծի ընթացքում:
- Բոլոր նախագծերը ներկայացվել են, քննարկվել և համաձայնեցվել Տեղական իշխանությունների հետ: Համաձայնության արդյունքում նախագծերը հաստատվել և կնքվել են ՏԻ-ի կողմից

*Աղյուսակ 2. Տավուշի ենթածրագրի շրջանակներում իրականացված հանրային իրազեկման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն*

Դ/հ	Համայնք	Ամիս, ամսաթիվ	Վայրը	Տևողություն	Մասնակի ցների թիվը	Այդ թվում՝ կանայք	Կին մասնակիցների %-ը
1	ք. Դիլիջան	18.12.2014	քաղաքապետարան	30 րոպե	31	23	74.2
2	գ. Ջորական	18.12.2014	գյուղապետարան	40 րոպե	15	6	40.0
3	գ. Պտղավան	18.12.2014	գյուղապետարան	30 րոպե	21	11	52.4
4	գ. Բագրատաշեն	19.12.2014	գյուղապետարան	35 րոպե	14	6	42.9
5	գ. Բերդավան	26.08.2013	գյուղապետարան	40 րոպե	20	12	60.0
6	ք. Բերդ	27.08.2013	ՀԶԿ ՓԲԸ-ի «Բերդի» տեղամ.	1ժամ 30 րոպե	14	6	42.9
7	ք. Նոյեմբերյան	23.06.2015	ՀԶԿ ՓԲԸ-ի «Նոյեմբերյանի» տեղամաս	1ժամ	24	17	70.8
<b>Ընդամենը</b>					<b>139</b>	<b>81</b>	<b>58.2</b>

#### IV. ՀՕՏ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

19. Ենթաժողովի V-ը չի առաջացնի որևէ մշտական և/կամ ժամանակավոր ազդեցություններ, քանի որ շահագործման և տեխնիկական սպասարկման միջոցառումները հիմնականում իրականացվելու են ՀՋԿ-ի առկա միջոցներով՝ համայնքային հողի կամ քաղաքային ենթակառուցվածքների կողմից սահմանված իրավունքների շրջանակում:
20. Տրված ենթաժողովի ազդեցությունը չի տարածվում մասնավոր հողերի կամ համայնքների հողերի վրա: Ջրի խողովակաշարերի շինարարությունը ժամանակավոր ազդեցություն չի թողնի ձեռներեցության վրա, քանի որ ճանապարհները և ճամփեզրերը բավականին լայն են, որպեսզի բնակիչների համար խոչընդոտներ և եկամտի կորուստ չառաջանա:
21. Ջրամատակարարման խողովակների և ջրավազանների վերակառուցման ընթացքում նախագծային տարածքներում տնային տնտեսությունների և ձեռներեցության վրա ազդեցություն չի ակնկալվում, քանի որ հետևյալ միջոցառումները նախատեսված են նմանատիպ ազդեցությունները վերացնելու համար՝ չնայած դրանց կարճատևությանը:
- Բոլոր բնակիչներին և առևտրականներին նախապես աշխատանքի բնույթի և ընթացքի վերաբերյալ տեղեկության տրամադրում, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ նախապատրաստություններ կատարել,
  - Աշխատուժի ավելացում և համապատասխան սարքավորումների տրամադրում աշխատանքները նվազագույն ժամկետում ավարտելու համար, և
  - Հին համակարգից տնային տնտեսությունների ու ձեռնարկատիրական հաստատությունների միացումները անջատելուց առաջ ճշգրտում, որ նոր համակարգին միացումը լավ է կազմակերպված:
22. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր է ժամանակավոր մուտքի սահմանափակում կամ դժվարանցանելիության պայմաններ: Հետևյալ կետերը պետք է ընդգրկվեն Կապալառուի պայմանագրի մեջ վերոհիշյալ խնդիրների ազդեցությունը մեղմացնելու կամ չեզոքացնելու համար:
- Նախքան քաղաքաշինական աշխատանքների սկիզբը շինարարության Կապալառու պետք է երաշխավորի այլընտրանքային լուծում, որը կապահովի համայնքի անդամների մուտքը դեպի իրենց հողային տարածք կամ բնակության վայր,
  - Մուտքի այլընտրանքային լուծման բացակայության դեպքում Կապալառու պետք է իր աշխատանքները ծրագրի այնպես (ժամային գրաֆիկով, ոչ բանուկ ժամանակամիջոցում, օգտագործելով հատուկ տեխնոլոգիաներ և այլն), որ տեղի բնակիչները ազդեցություն չկրեն: Կապալառու պետք է նախօրոք տեղեկացնի բոլոր բնակիչներին և առևտրականներին աշխատանքի բնույթի և տևողության մասին, որպեսզի վերջիններս ձեռնարկեն համապատասխան միջոցներ,
  - Սպառողի մուտքը գործող բիզնես պահպանելու համար կապալառուն պետք է ապահովի փայտե շարժական անցուղիներ և համապատասխան մուտք մեքենաների համար խրանուղիների վրայով:

- Նման չկանխատեսված դեպքերում, երբ հողատերը կորցնում է իր բերքը, դեպի հողատարածք մուտք չունենալու պատճառով, Կապալառուն պետք է զեկուցի վերահսկող խորհրդատուին և դադարեցնի քաղաքաշինական աշխատանքները տուժած վայրերում մինչև բերքի կորստի փոխհատուցումը, ինչպես նշված է ՀՕՏՕ դրույթներում:
- «ՀԶԿ» ՓԲԸ-ն կվերահսկի շինարարության ազդեցությունը՝ համաձայն նկարագրված ընթացակարգերի և մոտեցումների:

## V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

23. Ենթաձրագիր V -ի համար հարկադիր տարաբնակեցման ազդեցությունների ուսումնասիրությունից հետո մշակվել է համալիր հետազոտական հաշվետվություն, վստահ լինելու համար, որ Ենթաձրագիրը չի ունենա ՀՕՏ ազդեցություններ: Ե՛վ ժամանակավոր, և՛ մշտական ազդեցությունները քննարկվել և վերլուծության են ենթարկվել ուսումնասիրության ընթացքում:
24. Ենթաձրագիր V -ը ընդգրկում է առկա ֆիզիկական միջոցների վերականգնում և բարելավում: Աշխատանքային նախագիծը հաստատում է, որ վերականգնողական և շինարարական աշխատանքները իրականացվելու են ՀԶԿ-ի սեփականություն հանդիսացող կամ քաղաքապետարանին պատկանող տարածքներում, ինչպես նաև այն տարածքներում, որտեղ իրավունք է տրվել քաղաքային ենթակառուցվածքներին:
- Միջոցառումները, անկախ սեփականատիրության կարգավիճակից կամ հողի տվյալ պահին օգտագործումից, չեն պահանջում մշտական կամ ժամանակավոր հողերի ձեռքբերում:
  - Բիզնեսի վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում:
  - Չի սահմանափակվի որևէ անձի մուտքը դեպի կառույցներ, բնական ռեսուրսներ կամ սպասարկման տարածքներ:
25. Շինարարության փուլում ՀԶԿ-ն կիրականացնի շինարարական աշխատանքների վերահսկողություն ցանկացած ժամանակավոր և մշտական ազդեցության հիմունքներով, ինչպես օրինակ՝ բիզնեսի կամ այլ կենսական աղբյուրների հասանելիության սահմանափակումը և այլն: Ցանկացած ազդեցություն, որը հայտնաբերվել է շինարարական աշխատանքների ժամանակ անմիջապես կհաղորդվի ԱԶԲ և կփոխհատուցվի ՀՕՏԾ-ի դրույթների հիման վրա: